10· ՆԱԶԱՐ–ՕՂԼՈՒ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի թաքավոր ա ըլնում. էդ թաքավորին էլ, իրա ախպորն էլ ժառանգ չի ըլնըմ։ Օրերից մի օր մի դարվիշ մտնըմ ա թաքավորի թախտը, բարով ա տալի, ասըմ ա.— Թաքավորը սաղ ըլի. խի՞ ես ըտենց տխուր-տրտում նստել։

Թաքավորն ասըմ ա.— Դարվիշ, ի՞նչ քու բանն ա, առ բաժինդ ու գնա։

Դարվիշն ասըմ ա.— Ես բաժին չեմ ուզըմ, համա պըտի ասես, թե խի՞ ես ըտենց տխուր։

Թաքավորը մտածըմ ա, ասըմ ա.— Շատ լավ կըլի, ասե՛մ, դարվիշները ըտենց բաների ղոչաղ են։

Ասըմ ա.— Դարվի՛շ, ես էլ, իմ ախպերն էլ զավակ չուննենք, մտածըմ եմ, թե մեր վերջի օրը մեր օջաղը ո՛վ պըտի ծխի։

Դարվիշն ասեց.— Թաքավորը սաղ ըլի, թե որ ինձ իրավունք տաս, ընենց բան կանեմ, որ երկուսդ էլ ժառանգ ունենաք։

Թաքավորն ասեց.— Ինչ որ սիրտդ ուզի՝ կտամ, թաքլի էտ բանը անես։

Դարվիշը հանեց էրկու հատ խնձոր տվուց թաքավորին, ասեց.— Էտ մինը դու քո կնկա հետ կեր, էն էլ քու ախպերը իրա կնկա հետ ուտի։ Կգա ժամանակը, էրկսիդ կնիկն էլ տղա կբերի։ Ինչ ժամանակ որ տղեքը կըլնի՝ ինձ կկանչնք, ինչ որ ձեր սիրտը կուզի, հախ կտաք։

Գալիս ա ինոը ամիսը, ինոը օրը, ինոը սահաթը, ինոը դախ-

2635—11

կեն թամամըմ ա, էրկսի կնանիքն էլ թեք են ընկնըմ՝ տղա են բերըմ։

Թաքավորն ասըմ ա.— Գնացե՛ք, էտ դարվիշին քթեք բերեք։

Էթըմ են դարվիշին բերըմ են, էտ էրեխոնցը մկրտըմ են, թաքավորի տղի անըմը դնըմ են Նաչար-Օղլի, ախպոր տղի անըմն էլ դնըմ են Միրզա-Վալի։ Դարվիշին էլ իրա կշռով մին ոսկի են տալի, ճամփա քցում։

Էրեխեքը մենձանըմ են, դառնըմ են տասը տարեկան։ Թաքավորի տղեն շատ ղվաթով ա ըլնըմ, ընենց որ դուռ ա գալի իրա հընգեր էրեխեքանց հետ հաղ անելու, մընի կուռն ա ջարթըմ, մընի գլուխն ա կոտրըմ, բարդիքը քաշ ա անըմ, էրեխեքանցը դնըմ վրեն, բաց թողըմ, մեկը վեր ա ընկնըմ մեռնըմ, մեկը ընկնըմ ա՝ մեշկը կոտրվըմ, մեկը նվաղըմ ա՝ շոր փետ ա դառնըմ, ընենց որ գոհ ու գանգատը ընկնըմ ա քաղաքի մեջ։ Քաղաքացիք թոփ են ըլնըմ, էթըմ են թաքավորի կուշտը գանգատ։

Ասըմ են.— Թաքավորը սաղ ըլի, ըտենց բան չի՛ ըլի, տղիդ խրատ տու, մեր էրեխեքը կոտորեց։

Թաքավորը ասըմ ա.— Շատ լավ, ես իմ տղի վճիռը կկտրեմ, թե աստված ինձ տղա էր տալու՝ թող խելոքը տար, խի՞ էր էտ գիժը տալի։

Տղեն գալիս ա տուն, թաքավորը ասըմ ա.— Դու էլ իմ տղեն չես սրանից ետը, թող կորի՛, որ պըտի ինձ իմ ժողովրթի մեջը խայտառակ անես։

Տղեն ասըմ ա.— Շատ լավ, ա՜յ հեր, կէթամ, համա տուր ինձ ծախսը, ձի, որ էթամ։

— Գնա քեզ հըմար մի լավ ձի ջոկա, ինչքան էլ փող ուզըմ ես վե կալ խազնիցը, մի ձեռք էլ սիլահ կապա վրիդ, գնա՛։

Նաչար-Օղլին էթըմ ա, ձին նի ըլնըմ, փող ա վեր ունըմ ու ընկնում ճամփա, էթըմ։ Իրա տեղիցը ընչար Աշտարակ էթըմ ա, տեսնըմ ա ենոնցը մի ձեն ա գալի, ետ մտիկ անըմ՝ տեսնըմ էս Միրզա-Վալին ա. կաննըմ ա ընչար գալիս ա, հասնըմ ա, Ասըմ ա.— Միրզա-Վալի. հլա ինձ իմ հերը դուռ արեց, դու ո՞ւր ես գալի։

— Չի ըլիլ,— ասըմ ա,— Նաչար-Օղլի, որ դու էթըմ ես, ես էլ պըտի գամ։

— Դե՛,— ասըմ ա,— արի՛ էթանք, բան չկա։

էթում են մի քիչ, տեսնում են մի ջհուդ, մի քյահլան ձի նի էլած, գալիս ա։

Ասում ա.— Միրզա-Վալի, պըտի էս ձին քու հըմար առնեմ։— Ջհուդը հասնում ա իրանց, բարև ա տալի։

Ասում ա.— Էտ ձին չե՞ս ծախի, առնեմ։

Ջհուդն իրա միչին ասում ա. «Էնենց գին ասեմ, որ չկարենա առնի, թողա էթամ»։ Ձին արժի հարիր մանեթ, ինքն էրկու հարիր մանեթ ա ասում։

Նաչար-Օղլին ասում ա.— Խոջա, մի ձեռդ տու տեսնամ։— Խոջի ձեռը բռնում ա, թափ տալի, ձեռը պրծնում ա՝ խոջեն ընկնում մեռնում ա, ձին նի են ըլնում, էթում։

Շատ են էթում, քիչ են էթում, աստված գիտի, օրը մթնում ա. էթում են մի ամարաթի թուշ գալի։ Դես են ման գալի, դեն են ման գալի, դուռը չեն թթնում։ Նաչար-Օղլին գուրզը քաշում ա տալիս պատի մի դիհը քանդում, նի են մտնում հասարի մեջը, ձիանը կապում ներքևը։ Միրզա-Վալին մնում ա ձիանոնց կշտին, Նաչար-Օղլին նի՛ելնում ա վիրև. էթում ա տեսնում ա ամարաթիմը մի աննման ախչիկ նստած քարգյահ ա անում, մի դհիցն էլ լաց ըլում։

— Բա՛րով քեզ,— ասում ա,— ա՛յ ախչի։

Ասում ա.— Հազար բարին էկար։

— Այ տղա, ղուշն իր թևովը, օցն իր պորտովը ըստեղ չի գալի. դու ո՞նց ես էկե։

Ասում ա.— Դեհ, էկել եմ էլի։ Ընչի՞ հըմար ես ըստի տրտում-տխուր նստած։

— Ի՛նչ անեմ, ա՛յ տղա,— ասում ա,— իմ վեց ախպերը գնացել են կռիվ, ես մնացել եմ ըսենց բալալղու[1] նստած։

Ասում ա.— Դվո՞րն են գնացել։

Ասում ա.— Դե՛սն են գնացել, քառասուն հոգի դև էն դհիցն ելն կռվում, իմ վեց ախպերն էլ էս դհից են կռվում։

— Դեհ,— ասում ա,— չի ըլի՞լ որ հաց շինես, ես տանեմ քու ախպորտանցը, ես էլ մի դհից քոմակ կըլեմ։

— Շատ լավ կըլի,— ասում ա։

— Դե՛հ,— ասում ա,— դու հացը շինա, ես էթամ իմ ախպորը

---

[1] Տխուր, (ծանոթ, բանաստեղծի)։

բերեմ թողամ քու կշտին՝ էթամ։— Վեր ա գալի ներքև, ձիանոնցը խոտ ա տալի, առնըմ ա Միրզա-Վալուն էթըմ վիրև,

Ասըմ ա.— Ախչի՛, էս իմ ախպերն ա, թող քու կշտին կենա, ես հացը տանեմ քու ախպորտանցը։

Նաչար-Օղլին հացը վեր ա ունըմ, իրա ձին նստում, էթում։ էթըմ տենըմ ա՝ մի գետի վրա քառասուն դև էն կողմից են կուվըմ, վեցն էլ էս կողմից։

Նաչար-Օղլին ինքն իրան ասըմ ա. «Թե էթամ քչվորի դհիցը կենամ՝ ասելու են հպարտ հողածին էր, գնաց նրանց դհիցը էլավ. թե շատվորի դհիցը կենամ՝ ասելու են վախեցավ, շատվորի դհիցը էլավ. էթամ մեչտեղը կաննեմ, բարև տամ, որ դիհը բարևս առնի՝ էն դիհն էթամ»։

Գնաց մեչտեղը կաննեց, բարև տվուց. քչվորը բարևն առավ։ Գնաց քչվորի կուշտը։

Ասեց.— Դե՛հ, ետ դառեք, հաց եմ բերե ձեզ հըմար, հաց կեր-բեք։— Կռիվը հարհանդացրին, ետ դառան քաշվեցին մի ղրաղը, նստեցին հաց ուտելու։

Ասեց.— Մի վախենաք, ես աղրզը կպահեմ, ընչար ձեր հաց ուտիլը։— Նրանք սկսեցին հաց ուտիլը, ինքն սկսեց կռիվ բաց տալը. կռվեց քառասունի հետ էլ, որին կոտորեց, որն էլ փախան գնացին։ Վեց ախպերը պրծան, տեհան, որ էս հաց բերողը քառասնին էլ՝ որին կոտորել ա, որին փախցրել, ձիուցը վեր ա էկել, ձին ա ման ածըմ, արինն ու ջուրը խառնվել ա ու էթըմ. էտ վեց ախպերը մնացին սարսափած. իրար ասեցին թե.— Ի՞նչ անենք որ էս մարթու լավութան տակիցը դուս գանք։

Դրանց պուճուր ախպերն ասեց.— Մենք էլա մեր քվոր հըմար ինք կռվում, հարցնենք, տեսնանք էտ մարթը ով ա, մեր քիրը տանք դրան։

Գնացին ասեցին.— Դու ի՞նչ մարթ ես, որ էտ լավութինը մեզ արիր, մեզ հըմար հաց բերիր, մեր դուշմանին էլ կոտորեցիր։

Ասեց.— Ես այսինչ երկրի թաքավորի տղեն եմ, իմ անըմն էլ Նաչար-Օղլի։

Վեց ախպերն էլ ասեցին.— Համեցե՛ք, էթանք մեզ ղոնաղ։

Նաչար-Նղլին ասեց.— Է՛թանք։

Ընկան ճամփեն ու գնացին։ Գնացին, գնացին հասան իրանց ամտրաթին։ Տեհան, որ իրանց հասարի պատի մի դիհը քանդած

ա։ — Վա՜յ,— ասեցին,— մենք մնացինք ամոթով էս տղի կշտին, մենք գնացել ենք կռիվ, էկել են մեր քիրը փախցրել, տարել։

Նաշար-Օղլին ասեց.— Ախպերտինք, խի՞ ըտենց տխրեցիք։

Ասեցին.— Ախպե՛ր, մենք գնացել ինք կռվելու, էկել են մեր քվորը տարել են։

Ասում ա.—Վա՛խիլ մեք. էտ պատը ես եմ քանդել, հրեն իմ ախպերն էլ ձեր քվոր կշտին նստած ա։ — Իրար հետ նի են մննում նեքսև, ձիանը կապում են, նի՛ստում են վիրև, տեսնում են ընդուր պես մինն էլ քվոր կշտին նստած։

— Դե՛,— ասում են,— էս մեր քիրն ա, էս էլ քու ախպերը, մենք հրմի էլանք ութը ախպեր, մեր էս քիրն էլ քեզ ենք տալի, ուզում ես՝ դու առ, ուզում ես՝ տուր ախպորդ։

— Ախպերտինք, որ ինձ եք տալի, ես էլ տալիս եմ իմ ախպորը։

Օխտն օր, օխտը քշեր հարսանիք են անում ու պսակում դրանց։

Էտ վեց ախպերը, մեկն էլ Նաշար-Օղլին ամեն օր էթում ին, ավդուշ բերում ին տուն, Միրզա-Վալին ու իրանց քիրը էփում ին, ուտում-խմում։ Դրանց քառասուն օթախ ա ըլում, եռեսուն ընի բլանիքը տալիս են Միրզա-Վալուն, մնի բլանիքը ախչկա ձեռին ա ըլում։ Ախչկանը թամբահ են անում, ասում.— Հը՛, էտ բլանիքը չտաս Միրզա-Վալուն։

Օրերի մի օրը, տունը խոլվաթ ա ըլում, Միրզա-Վալին ասում ա.— Ախչի՛, խի՞ չես էտ օթախի բլանիքը տալիս, տեսնամ ի՞նչ կա էն օթախումը։

Ասում ա.— Միրզա-Վալի, աստված վկա հեչ բան չկա ըտի, մենակ,— ասում ա,— մի բռնավոր կա, էկել էր որ ինձ փախցնի, իմ ախպերտինքը բռնել են, կանդալեքը դրել ոնները, ընտեղ կապել։ ընչար պըտի սոված մնա ընտեղ, որ սատկի։

Ասում ա.— Չէ՛, պըտի բլանիքը տաս, էթամ տեսնամ ինչ տեսակ բռնավոր ա։

Վերջը ախչկա ճարը կտրվում ա՝ բլանիքը տալիս ա, ասում ա.— Միրզա-Վալի, տար դուռը բաց արա, նա քե ա՛լբիալը կճանանչի, կասի. «Միրզա-Վալի ջան, հանա թուրդ, ինձ տու, մեռնեմ»։ Թուրդ որ տվիր, կասի. «Օխա՜յ, մին էլ տուր», չտաս, ասա. «Մորիցս մին եմ էլել», թե չէ կսաղանա քեզ կտա, դու կմեռնես։

Միրզա-Վալին բլանիքն առավ, գնաց դուռը բաց արուց, տե-

հավ, օ՞հ, հրես մինը կանդալաղրմը կապած, օխտը թիզ միրուքն՞ ա, մի թիզ՝ բոյը։

Ասեց.— Բարո՞վ, Միրզա-Վալի,— ասեց,— հանա թուրդ տո՛ւր, ես մեռնեմ, բոլ ա ըստեղ տանջվեմ։

Միրզա-Վալին թուրը հանեց ու տվուց։

Ասեց.— Օխա՞յ, Միրզա-Վալի մին էլ տո՛ւր՝ մի լավ մեռնեմ։— Միրզա-Վալին մին էլ տվուց, ախչիկը հասավ որ կուռը բռնի, չկարաց, օխտը թիզ միրուքը, մի թիզ բոյը կանդալեքը եռացրեց, կտրրտեց, մի սիլլա տվուց Միրզա-Վալուն, Միրզա-Վալին մեռավ, նա ախչիկը քցեց շալակն ու փախավ։

Իրիկունն օխտն ախպերն ավի տեղիցն էկան. էկան տեհան, որ տանը «նա թաս վար, նա համամ»[1]։ Վեց ախպերով էլ ալբիալը իմացան, ասեցին.— Կարող ա դուռը բաց արած ըլի։— Գնացին տեհան, որ Միրզա-Վալին վեր ընկած, ուշքը գնացած, օխտը թիզ միրուքը, մի թիզ բոյը չկա, ախչկանը վեր ա կալել, տարել։

Նաչար-Օղլին ասեց.— Ախպերտինք, էս ի՞նչ բան ա։

Ախպերտինքն ասեցին.— Դրան էսա չորս ամիս ա բռնել ինք, որ էս օթախի միչին սատկեր. քու ախպերը դուռը բաց ա արել, քու ախպորը տվել ա էս օրը քցել, մեր քվորն էլ վեր ա կալել, տարել։

— Բա,— ասըմ ա,— ո՞ւր պըտի տարած ըլի, տեղը չե՞ք իմանըմ։

Ասըմ ա.— Չէ՛, չենք իմանըմ, նա մի վիրունի բան ա, ով ա գիտում ո՛ւր ա տարել։

— Դե,— ասըմ ա,— քշերը կքնենք, առավոտը կլիսանա, ես դրա քամակիցը կէթամ։

Առավոտը վեր են կենում, Նաչար-Օղլին ասըմ ա.— Ախպերտինք, իմ ախպերը քառասուն օր ձեզ ամանաթ, թե ընչար քառասուն օրը էկա՝ էն ա էկա, թե չէկա՝ յա իմ ախպորը սըպանեք, յա թողեք՝ էթա իրա հոր տունը։

Ասըմ են.— Շատ լա՛վ։

Նաչար-Օղլին նստըմ ա իրա ձին ու ասըմ ա.— Դե՛հ, մնացեք բարին, ես էթըմ եմ։

Նաչար-Օղլին տանիցը դուս գալուն պես, վեց ախպերը Միրզա-Վալուն փաթաթըմ են սանիցը, ճրաքը դնում գլխին, շինում են

---

[1] Բառացի՝ «Ոչ թասը կա, ոչ բաղնիքը», «ոչինչ, ոչ ոք չկա» նշանակությամբ, (ծանոթ. կազմողի)։

Ճրաքթաթ, ասում են.— Քու տեղը էտ ա, մեր քվորը կորցրիր, էն թավուր տղամարթն էլ դենը գնաց, յա գա՝ յա չգա։— Օրը մի ժում հաց են տալի, էն էլ քիչ-միչ։

Գանք, խաբարը տանք Նաշար-Օղլուցը։

Նաշար-Օղլին էթում ա, շատ ա էթում, քիչ, աստված գիտա, տեսնում ա հրես մի տղամարթ մի հանդի գլխի մի ջեյրան բռնած։ Էտ ջեյրանը բաց ա թողում, էրկու ջաղացաքար ծափ տալով վազում ա ենոուցը, կալնում ա,

Ասում ա.— Վա՛յ, էս ինչ թավուր ղվաթի տեր ես, որ ջաղացաքարը ծափ տալով էթում ես ջեյրանը կալնում։

— Տղե՛ն Նաշար-Օղլին ա, որ վեց ախպոր քիրն առել ա, նըստել, ուտում-խմում ա։

Ասում ա.— Ա՛յ տունդ շինվի, ես եմ Նաշար-Օղլին։

Ասում ա.— Որ դու ես, ո՞ւր ես էթում բա՞։

Ասում ա.— Օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորը էկել ա իմ կնիկը փախցրել ա, տարել. էթում եմ ետևիցը, որ քթնեմ։

Ասում ա.— Որ ըտենց ա, ես էլ քու ընգերը,— բաց ա թողնում ջեյրանին ու ասում.— Ջ՛եյրան, գնա՛, քու արևի ձենն ածա [1]։

— Մեկ չըլենք, էրկու ըլենք,— ասում ա Նաշար-Օղլուն ու էթում են։ Շատ ու քիչը աստված գիտա, տեսնում են մի ձորի միչի հրես մի մարթ կա, ահագին քարափները վեր ա ունում, տանում իրար գլխի դնում։

— Բա,— ասում ա,— մարթն էլ էս ղդար ղվաթ կունենա՞, էդ քարափները դու ո՞նց ես վեր ունում։

Ասում ա.— Էս ի՞նչ ղոչաղութին ա, տղեն Նաշար-Օղլին ա, որ վեց ախպոր քիրը առել նստել, ուտում-խմում ա։

Ասում ա.— Ես եմ Նաշար-Օղլին, որ էն օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորը իմ կնիկը փախցրել ա տարել, էթում եմ. քամակիցը։

Ասում ա.— Ախպե՛ր, իմ արինն էլ քու արնի հետ, էրկու չըլենք՝ իրեք ըլենք. ես էլ եմ գալի քու հետ։

Էթում են մի վայրենի մեջում վե գալի։ Ըտեղ քար են բերում, փետ են բերում, մի դագա են շինում, միչին սաքինաթ են անում։ Սրա են դնում, օրը մեկը ետ ա ընկնում ըտեղ հաց էփում, կիրակուր էփում, էն էրկուսը էթում են ավղուշ։ Էտ առաչին սրեն ջեյրան բռնողինն ա։

[1] Ազատ շրջիր, (ծանոթ բանահավաքի)։

Ջեյրան բռնողը օջաղը վառում ա, հացը թխում ա, ավերը[1] էփում ա, ղրաղ ա դնում, մին էլ տենում ա, ըհը՛, հրես օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորը էկավ։

Գալիս ա, ասում ա.— Բարև քե՛զ, ջեյրան բռնող,— ասում ա,— սոված եմ, ինձ մի քիչ հաց տու՝ ուտեմ։— Բռնում ա էրկու հաց ա տալի, էրկու էլ ավ։ Մինը մի հացի մեչ ա կոլոլում, մինը՝ մի հացի, մինը ճխտում ա մի պլտուխը, մինն էլ ճխտում ա էն մի պլտուխը։

Ասում ա.— Ա՛յ տնաշե՛ն, ծանդր կե, էլի կտամ, ի՞նչ ես ըտենց ուտում։

Օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորը քաշում ա մի սիլլա տալիս ջեյրան բռնողին, թե.— Դու ո՛վ ես, որ ինձ էտ խոսքը ասում ես։

Ջեյրան բռնողի ուշքը էթում ա, վեր ընկնում։ Օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորը էլած-չէլածը հավաքում ա, տանում։

Քաշում ա արանքը մի սհաթ, ջեյրան բռնողի ուշքը գլուխն ա գալի, բերում ա մի մեծ շոր փրթաթում ա գլուխը, կրակ անում, որ նորից հաց էփի, որ ախպերտինքը գան ուտեն։

Ընչար դրա հանգը-հունգը, ախպերտինքը գալիս են, տենում են, հլա չի էփե, գլուխն էլ մեծ-մեծ շոր ա փրթաթել։

Նաչար-Օղլին ասում ա.— Խի՞ ես ըտենց։

Ասում ա.— Գլուխս շատ փիս ցավում ա, մեռնում եմ։

— Դե՛հ,— ասում ա,— բան չկա, դու ղրաղ նստի, մենք կէ-փենք։— Էփում են, ուտում, քշերը քնում, առավոտը լիսանում ա, էլի պըտի իրենց գործին էթան, էն օրն էլ սրեն ընկնում ա քարափ վեր ունողին։

Քարափ վեր ունողն էլ բերում ա օջաղը վառում, հաց թխում, ավերը էփում, պրծնում, մին էլ տենում ա օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորն էկավ։— Ըհը,— ասում ա,— էս էր ջեյրան բռնողի գլխացավը։

Գալիս ա ասում ա.— Բա՛րև քեզ, քարափ վեր ունող։

Ասում ա.— Բա՛րով, հազա՞ր բարի էկար, հաց բերեմ, կե՛։— Բերում ա իրեք հաց ա տալի, իրեք էլ ավ տալի։ Օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորը կես ա անում, կեսը ճխտում ա մի պլտուխը, կեսը ճխտում մի պլտուխը։

Ասում ա.— Ա՛յ տնաշեն, ծանդր կե, էլի կըտամ կուտես։

---

1 Որս, (ծանոթ. բանահավաքի)։

Օխտը թիզ միրքավորը տեղիցը վեր ա կենում ու դրան սիլլա տալիս։ Տալուն պես ուշքը էթում ա. էլած-չէլածը թոփ ա անում, տանում։ Մի երկու սահաթ անց ա կենում, ուշքը գալիս ա գլուխը, բերում մուխը դրնում, էլի հաց էփի, ախպերտինքը հանդիցը գալիս են, տեսնում են օջաղը նոր վառել ա, ինքն էլ տնքում ա։

Նաշար-Օղլին ասում ա.— Էտ ի՞նչ բան ա, որ գլխներդ ցավում ա։

— Դե,— ասում ա,— ցավում ա, ի՞նչ պըտի անենք։

— Դե ղրաղ նստի,— ասում ա,— ես կէփեմ հացը։

Հացը էփում են, ուտում, խմում ու քնում։

Առավոտը լիսանում ա, սրեն ընկնում ա Նաշար-Օղլուն։ Դրանք երկուսը էթում են ավ։ Նաշար-Օղլին օջաղը վառում ա, հացը էփում ա, պրծնում ա, մին էլ տեսնում ա էն կշտիցը օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորն էկավ։ Նաշար-Օղլին ասում ա.— Տղերանց գլխացավն էկավ։

Օխտը թիզ միրքավորը գալիս ա, ասում.— Բա՛րև քեզ, Նաշար-Օղլի։

Նաշար-Օղլին ասում ա.— Բարով էկար։

— Հը՛,— ասում ա,— ի՞նչ ես ասում։

Ասում ա.— Ինձ հաց տու ուտեմ, սոված եմ։

Նաշար-Օղլին տեղիցը վեր ա կենում, մի սիլլա տալու քիմի վեր ա քցում, ասում.— Ա՛ռ քեզ հաց։

Շատ զիլ ծեծում ա, տանում ա ղրաղին, մի ծառից միրուքը ղայիմ փաթաթում, կապում, ինքը էթում թինկը տալի մնում։

Տղեքը հանդիցը գալիս են, տեսնում են որ էսօր մուխ չկա։

— Վա՜յ,— ասում են,— Նաշար-Օղլին մեռել ա, մենք էլի սիլլին դիմացանք։ Գալիս են, տեսնում են Նաշար-Օղլին ըսենց թինկը տված ա։

Նաշար-Օղլին ասեց.— Ձեր գլխացավը ըսօր էկել չի, բա ո՞նց պըտի ըլի։

Տղերքն ասեցին.— Նաշար-Օղլի, դրուստ չի էկե՞։

Ասեց.— Ո՞վ էր, որ պըտեր գար։

Ասեցին.— Ա՜յ տնաշեն, էն օխտը թիզ միրքավորը, մի թիզ բոյավորը գալիս էր մեզնից հաց ուզում, ուտում էր, ենանա էլ վեր էր կենում մեզ սիլլա տալի, հացերը թոփ անում, տանում։

Նաշար-Օղլին ասեց.— Հըմի որ տեսնաք, կճանանչե՞ք նրան։

— Խի՞ չենք ճրնանչի։

— Դե էկե՛ք, էթանք տեհեք։

Գնացին տեհան էտ անիրավը իր միրքովը էտ ծառը քոքահան ա արել, առել գնացել։

Նաշար-Օղլին ասեց.— Ոչինչ չկա, ախպերտինք, ծառի իղը մեղ կտանի նրա մոտ. հացը ուտենք, իղը բռնենք էթանք։

Նստեցին հաց կերան, վե կացան իղը բռնեցին, քամակիցը գնացին։ Գնացի՞ն, դեմ էլան մի էրի, տեհան ծառը մնացել ա դըրսևը, ինքը նի ա մտել նեքսևը։

Նաշար-Օղլին ասեց.— Ախպերտինք, դե հըմի ըստեղ ա, որըդ սիրտ կանեք՝ նի մտնեք սրան հանեք։

Ջեյրան բռնողն ասեց.— Ինձ կախ արեք, ես կմտնեմ, կհանեմ։ Պարանը քցեցին կռնատակիցը, կախ արին։

Մի քիչ կախ արին, ասեց.— Էրվեցի՞, կրակվեցի՞, ինձ քաշեք։

Քաշեցին դուս։ Քարափ քցողն ասեց.— Այ, քո տղութինդ քեղ խռով, ի՞նձ կախ արեք։—Քարափ քցողին կախ արին. էն էլ ասեց.— Էրվեցի՞, վառվեցի՞, ինձ հանեք։— Նրան էլ հանեցին։

Նաշար-Օղլին ասեց.— Ինձ կախ արեք, որ ասի՝ Վառվեցի՞, կրակվեցի՞, չը հանեք։— Նաշար-Օղլուն կախ արին, ինչքան ասեց. «Էրվեցի՞, կրակվեցի՞» չը հանեցին։ Գնա՛ց էրի տակին վեր էկավ։ Ընկավ էտ էրի մեչը ման էկավ, տեհավ, որ էրի մի դրաղին օխտը թիզ միրքավորը գլուխը դրել ա էն ախչկա ծնկին, քնել ա։

Նաշար-Օղլին մոտ գնաց, բարով տվուց։

Ախչիկն ասեց.— Բարո՞վ, հազար բարի, Նաշար-Օղլի, դու ըստե՞ղ։

— Ի՞նչ ես զարմանըմ, Հըմի ի՞նչ անեմ, թուրը քաշեմ, տամ սըպանե՞մ։

Ասեց.— Ես որ ըստե նստած եմ, տալ մի՛, մի բարց տուր դնեմ գլխատակը, ես վե կենամ, ենենա դու գիտաս։

Նաշար-Օղլին բարցը տվուց, ախչիկը դրուց գլխատակը, տեղիցը վե կացավ, հեռացավ։

Նաշար-Օղլին ասեց.— Հըմի քնած տամ սըպանեմ նամարդութուն կըլի, վե կացնեմ, նոր տամ։— Ինչ թահրը բրթեց, չվեկացավ, թուրը հանեց, նրա կրնկի մեչը կոխեց պտըտեց, նոր աչքը բաց արեց, տեհավ Նաշար-Օղլին ա, էլ ետ աշկը խփեց։

Ասեց.— Վե՛ր, նա՛մարդ, խի՞ ես քնում։

Ճարը կտրվեց վե կացավ։ Էրկուսը առան իրար։ Նաշար-Օղլին շլինքը օլորեց, տակը դրեց, քաշեց թրով շլինքը կտրեց։ Խեղճ ախշիկը սըպռել, պատին էր կպել։ Տեհավ Նաշար-Օղլին սըպանեց նրան, սիրտ առավ, էկավ փաթըթվավ նրան։

Ասեց.— Նաշար-Օղլի, հըմի արի, սրա հարստությունը տե՛ս։— Տարավ մեկ-մեկ շանց տվուց, էլ աշխարքըմը ապրանք, խալի-խալիշա, փող չէր մնացել, թալանել բերել, կիտել էր ըտեղ։

Նաշար-Օղլին ինչ կա՝ հավաքեց, բերեց ծակի աղաքը, ձեն տվուց իրա ընկերներին, ասեց.— Տղեք, պարանը կախ արեք։—Ապրանքը կախեց պարանիցը, քաշեցին տղեքը։

Ախշիկն ասեց.— Նաշար-Օղլի, արի քեզ քաշեն հանեն, եննա դու ինձ կհանես։

Նաշար-Օղլին ասեց.— Չէ, հըլա քեզ հանեն, եննա ինձ կհանեն։

— Տե՛ս,— ասեց ախշիկը,— ինձ տենողը քեզ չի հանիլ. արի դու դուս արի, եննա էլ ինձ դու կհանես։

— Ա՜յ ախշի,— ասեց,— ըտենց բան չի ըլի, նրանք իմ լավ ախպերտինքս են, ինձ ըստեղ չեն թողալ։

Ասեց.— Նաշար-Օղլի, դու գիտաս, բան ա, որ քեզ չհանեցին, հրեն էն օթախըմը իրեք ղոչ կա, մինը սև ա, մինը՝ կարմիր, մինը՝ սիպտակ. ղայրաթ կանես, քեզ կքցես սևի վրեն, սևը կքցի կարմրի վրեն, կարմիրը կքցի սիպտակի վրեն, սիպտակը կհանի քեզ լիս աշխար։

Ախշիկը քաշեցին հանեցին. տղեքը տեհան, որ լիսն էրեսիցը կաթըմ ա, մասլահաթ արին, որ Նաշար-Օղլուն չհանեն, մինը ախշիկը վեր ունի, մինն էլ՝ մալ ու դովլաթը։ Էնքան Նաշար-Օղլին ձեն տվուց.— Ա՛խպերտինք, ինձ հանե՛ք ֆորիցը,— մինն էլ ա հ՚անգաջ չարին։

Նաշար-Օղլին սրտի հերսից գնաց դըրա ղոչերը. գնաց շշկլուքունից իրան քցեց սիպտակի վրեն, սիպտակը քցեց կարմրին, կարմիրը քցեց սևին, սևը տարավ մութ աշխար։

Նաշար-Օղլին էտ մութ աշխարըմը գնաց, շատ ու քիչը աստված գիտա, գնաց տեհավ մի ծեր հալիվոր իրեք ճամփի մեչ նըստած ա։

Ասեց.— Բարի օր քեզ, ա՛յ բաբի։

Ասեց.— Հազար բարին էկար, ո՛րթի։

Ասեց.— Բա՛բի, ջան, ղարիբ մարթ եմ, էս իրեք ճամփից ո՞րն ա դըբա լիս աշխար էթըմ։

Ասեց.— Ո՛րթի, դու ո՞ր երկրացի ես, որ լիս աշխարն ես հարցընըմ։

Ասեց.— Բա՛բի, ես լիս աշխարիցն եմ, Նաշար թաքավորի տղեն եմ։

Բաբին ասեց.— Վա՜յ, խեղճ տղա։ Որթի, էս աչու կռանդ ճամփով կէթաս. էնքան կէթաս, մի պառավ կնիկ, մի չոր քարափի վրեն նստած լաց ա ըլըմ, նրա մինուճար տղեն եռեսուն տարի ա կորել ա, նրա հըմար լաց ա ըլըմ, կէթաս էն պառավի ոնները կընկնես, կասես. «Նանի ջա՛ն, քու մեկուճար տղի արևը սիրես, ինձ մի ճամփա շանց տու, էթամ լիս աշխար։ Ես էլ քու տղի պես մինուճար եմ»։ Դե գնա՜, աստված քեզ հետ, էն պառավը մի բան կասի։

Տղեն ընկավ ճամփա ու գնաց։ Շատ ու քիչը աստված գիտա, տեհավ մի չոր քարափի վրա մի կնիկ նստած լաց ա ըլըմ։ Էտ պառավին բարով տվուց ու լաց էլավ, ընկավ ոնները։ Ասեց.— Նանի ջա՛ն, քու աստծու սիրու խաթեր, ինձ մի ճար արա, քու մեկուճար տղի արևը սիրես, ինձ մի ճար արա։ Ես էլ եմ մինուճար, լիս աշխարի ճամփեն շա՛նց տու ինձ։

Ասեց.— Բա՜ ա՜յ որթի, ես ի՞նչ ճամփա շանց տամ քեզ։— Ասեց.— Ա՛յ որթի, գնա՛, առաջիդ մի մեծ մեշա կա, ըտեղ մի մեծ ծառ կա, էտ ծառի վրին մի Զմբուռ ղշի բուն կա. Զմբուռ ղուշը էն բնումն ա, էս իրեք տարի ա նրա ոտը յարա ա, նրան ուրիշ ղշեր են բան բերում տալի՝ ուտըմ ա, թե կարաս առանձին նրա ոտի յարեն փլցնես, ընենց որ ղուշը քեզ չըտեսնա, որ բլեց՝ յարեն կդինջանա, քեզ ձեն կտա։ Կասի. «Ո՞վ եք, ինս եք, ջինս եք, ֆողածին եք, հրեղեն եք, դուս եկեք, ինչ ուզում եք՝ կտամ»։ Նոր դու նրա աշկին կերևաս, նա կհանի լիս աշխար քեզ։

Տղեն պառավիցը շնորակալ կըլի ու ճամփա կընկնի կէթա։ Կէթա էտ մեշի միջովը՝ ընչար էտ մեծ ծառին ռաստ կգա։ Մտիկ կանի, կտեսնա, դրուստ որ, ահագին Զմբուռ ղուշը ըտեղ մալամիշ ա ըլըմ։ Կէթա մի երկա՜ր ձող կկտրի, կբերի իրա դանակը կկապի էտ ձողու ծերիցը, ծառիցը մխելի հեռու մի փոս կքանդի, կգա ծառի տակը կկաննի ու ձողին կմեկնի, յարին դանակով կտա։ Տալու պես յարեն կփլչի, ինքը կփախչի, կմտնի էն փոսի մեջը։ Ղուշն իրան փարալամիշ կանի, ծառի ճղերը կջարթոտի, չորս ղրաղը թամաշ կանի, որ

մարթ ընկնի ձեռը՝ փարշա-փարշա անի։ Մի քիչ ենենա ոտը կդինջանա. կասի. «Օխա՜յ, ոտս դինջացավ, ինս եք, ջինս եք, ֆողածին եք, հրեղեն եք, ինչ որ ուզեք՝ կտամ»։

Տղեն ֆորից դուս կգա, կասի.— Ես եմ արե, Զմրո՛ւտ ղուշ։

Կասի.— Հը՛, հողածին, ասա տենեմ, ի՞նչ ես ուզում՝ տամ։

Ասեց.— Ոչինչ բան եմ ուզում, ինձ հանես լիս աշխար։

— Այ հա՜յ,— ասեց,— մի տարի առաչ էկած ըլեիր։ —Ասեց. —Տղա՛, ըտեղ մի մոտիկ գեղ կա, համաշա միս են մորթում, գնա՝, օխտը ղոչի դմակ առ բե։

Տղեն գնաց էտ գեղը, օխտը ղոչի դմակ առավ, բերեց ղըշի կուշտը։ Ղուշը թևերը փռեց, նստեց։ Նաշար-Օղլին դմակը վրին դարսեց, ինքն էլ նի էլավ, միշկին նստեց։

Ասեց.— Դե, ես թռչում եմ, ինչդար ղու անեմ, մի դմակ կքցես բերանս։

Ամեն ղու անելիս մինը քցեց, էկավ վերչի դմակը ձեռիցն ընկավ գետինը։ Մեկ էլ ղու արուց՝ դմակ չկար, ձեռը քցեց իրա փափուկ մսիցը պոկեց ու քցեց բերանը։ Ղուշը տեհավ դմակը փոխվեց, էս ուրիշ բան ա, լիղվի տակին պահեց, ընչար հանեց լիս աշխար, ընտեղ վեր էկավ։

— Հը՛,— ասեց,— տղա՛, դե գնա, լիս աշխարն ա, գնա քու մուրազին հասի։

Տղեն ուզեցավ որ էթա, չկարացավ էթա։

Ասեց.— Դե ա՛րի, արի,— հանեց լիղվի տակիցը միսը, դրուց տղի պոկած տեղը, ասեց.— Իմ բմբլից մինը պոկա, թքոտա քսա, կլավանա։ — Տղեն բմբլիցը մինը պոկեց, թքոտեց, քսեց յարին, լավացավ, վերկացավ գնաց։

Գնաց, գնաց, շատն ու քիչը աստված գիտա, գնաց հասավ էլ էն զաղի առաչը, տեհավ, որ իրա էրկու հընգերը, էն ախչիկը ընտեղ են, գնաց բարով տվուց նրանց։

Նրանք էլ բարովն առան, մինը մնին ասեց.— Ադա՛, կասես էս Նաշար-Օղլին ըլի։— Էն մինն էլ ասեց.— Չէ՛, նա ո՞րտեղ ա ընկել, որ դուս գա։

Նաշա՛ր-Օղլին ասեց.— Բարեկամնե՛ր, ի՞նչ բան ա, որ դուք ըտեղ կաննել եք։

Նրանք ասեցին.— Ախպե՛ր, դարիբ մարթ ես, պատահել ես ըստեղ, էս մալ ու դովլաթը, էս ախչիկը էրկսիս մեշտեղն ա, հըմի սա-

զրմ չենք. ես ասրմ եմ. «Մալ ու դովլաթը դու վե կալ, ախչիկը՝ ես»,— Նա ասրմ ա. «Չէ՛, համ պըտի մալ ու դովլաթը կիսեմ, համ ախչիկը»։

Ասրմ ա.— Էտ մալն ու դովլաթը ու ախչիկը ձեզ ո՞րտեղան ա։ Ասրմ են.— Ախպե՛ր, քեզ դուզն ասենք, էս մալն ու դովլաթն էլ, էս ախչիկն էլ Նաչար-Օղլունն ա, էտ մարթը նի մտավ էս էրի մեչը, էտ մալն էլ, էս ախչիկն էլ ընտեղից հանեց, մենք էլ նամարդութուն արինք, նրան թողեցինք էտ ֆորի մեչը, հըմի մենք էլ սազրմ չենք, յոլա չենք էթրմ։

— Բա էտ ձի՞ն,— ասեց։

— Էտ ձին էլ ա նրանը։

Ոտը դրուց ձիու զանգուն, նի էլավ ձին, ասեց.— Ես ո՞վ եմ, ջեյրան բռնող։

Թե.— Վա՛յ է՛, Նաչար-Օղլին ես։

— Դե,— ասեց,— նամարդներ, չեմ ուզրմ ձեզ սրպանեմ, դուք արիք, ես չեմ անի, առեք էս մալ ու դովլաթը ձեզ, ես վեր ունեմ էտ ախչիկը, էթամ հասնեմ իմ մուրազին։

Վե կալավ ախչկանը, ընկավ ճամփա ու գնաց։ Մնացել ա մի օր, որ քառասուն օրը թըմամի։

Դևերի հինգ ախպերը ասրմ են.— Միրզա-Վալուն սրպանենք,— պուճուր ախպերը թողրմ չի, ասրմ ա.— Թող քառասուն օրը թըմամի, ենենա։

Պուճուր ախպերը նի էլավ ամարաթի կտուրը, տեհավ հեռվանց մի թոզ ու դուման ա գալի, վեր էկավ ախպորտանցն ասեց.— Ա՛յ ձեր տունը քանդվի, Նաչար-Օղլին էկավ, վեր՛եք Միրզա-Վալուն ազատենք ըտեղան։

Վե կացան շշկլած, Միրզա-Վալու պարանը քանդեցին, տարան մեկ էրկու կուժ ջուր լցրին վրեն, լեղացրին, ձեթրմը կորած էր, շորերըն էլ փոխեցին, տարան վիրի դիհը նստացրին։

Էկավ Նաչար-Օղլին, մոտացավ ամարաթին, վեց ախպերն էլ վազեցին դրա առաջը.— Բարո՛վ, հա բարո՛վ, հաղա՛ր բարով, ամեն փորցանքից ազատ,— բարովեցին Նաչար-Օղլուն էլ, քվորն էլ, տարան նեքսև։

Նաչար-Օղլին ասեց.— Ա՛յ տղեք, բա Միրզա-Վալին ո՞ւր ա։

Ասեցին.— Մի քիչ նաչաղացել ա։

Գնացին նեքսև, տեհան որ Միրզա-Վալին թեք ընկած տնքրմ ա։

Նաշար-Օղլին ասեց.— Միրզա-Վալի, էտ ի՞նչ ես էլել։

Ասեց.— Օ՜ֆ, չեմ իմանում, գլուխս ցավում ա։

Դևերի պուճուր ախպերը տեհավ, որ Միրզա-Վալին էտ բանը պրտի հայտնի, առաչ ինքը հայտնեց։

Ասեց.— Նաշա՛ր-Օղլի, որ օրը որ դու տանիցը դուս ես էկել, էն օրն,— ասեց,— իմ ախպերտինքը սրան շինել ին ճրաքթաթ ընչանք էսոր, հենց նոր ա հետ ենք արել։ Հինգ օր առաչ ուզում ին փչացնեն, ես չեմ թողել, հրեդ քո ախպերն ա, հարցրու տես։

Նաշար-Օղլին ասեց.— Միրզա-Վալի, հա՛, ըտե՞նց ա։

Ասեց.— Ըտենց ա՛։

— Դե,— ասեց,— վե կաց տեղիցդ։

Դևերի պուճուր ախպորն ասեց.— Գնա՛, ձիանը թամքա, մի ձի էլ քու հըմար թամքա, ա՛յ տղա։

Տեղիցը կանգնեց ինքը, ասեց.— Ես էս տան չորս պատերիցն եմ շնորակալ, ոչ թե ձեզանից, որ դուք էս վատութունն իմ լավութունի առաչը բերիք,— ասեց ու իր ձին ինքը նի էլավ, մի ձի ախչիկը նի էլավ, մի ձի՝ Միրզա-Վալին, մի ձի էլ՝ պուճուր ախպերը ու ընկան ճամփա, գնացին դրբա իրա հոր տունը։

Գնացին, մի վայրենի մեշի թուշ էլան։ Տեհան էտ մեշի գլխիցը մի ջեյրան փախավ, ընկավ մեշեն։ Նաշար-Օղլին ձին քշեց դրա քամակը. գնա՜ց, էտ ջեյրանը մի էրի մեշ մտավ կորավ։

Նաշար-Օղլին ձին կապեց ծառիցը, թուրը քաշեց ու գնաց դրբա էրը։ Գնաց տեհավ որ մի պառավ, մի մեծ թեշիկ մանըմ ա, մի մեծ արճիճ քցել ա բերանը ծամըմ ա, ասեց.— Է՜յ քավթառ, ջեյրանս էկավ ըստեղ, տեղն ասա։

Ասեց.— Քավթառը հերդ ու մերդ ա. էն ա, էն զաղեն մտավ, գնա հանա տար, էլ ինձ ինչի՞ ես ըտենց ասըմ։

Նաշար-Օղլին գնաց էն մի զաղի մեշը, որ քթնի ջեյրանին, տեհավ ջեյրանը դառել ա մի հուրի-փերի ախչիկ, դևը դրել ա գլուխը ծնկանը, քնել ա։

Բարով տվուց ախչկանը, ասեց.— Ախչի, ջեյրանը էկավ մտավ ըստեղ ի՞նչ էլավ։

Ասեց.— Սո՛ւս, սո՛ւս, Ջեյրանը ես եմ, դևը կզարթնի, մենձ թիքեդ անդաջդ կթողա։

Ասեց.— Դուս գնա, հըմի զաղի դուռը շարեցին, որ քեզ սրպա-

նեն։ Գնա առաջ էն շարող պառավին սրպանի, ենենա արի սրան սրպանի։

Նաշար-Օղլին դուռ էկավ դուռը, տեհավ պառավը ահագին քարափներ բերում ա, դռանն ա դեմ անում։

Նաշար-Օղլին ասեց.— Պառա՛վ, էտ ի՞նչ ես անում։

Ասեց.— Պառավ է՛լ, պառավի տղա էլ, ֆողեմ գլուխդ, ես ինձ հըմար հաղ չանեմ, թե դու՝ ի՞նչ ես անում։

Նաշար-Օղլին թուրը հանեց ու տվուց պառավին։

Պառավն ասեց.— Վա՜յ, թիկունքդ գեննին մաշի, տարավ իմ Ջեյրանին,

Պառավը փչացավ. Նաշար-Օղլին ետ դառավ, գնաց Ջեյրանի կուշտը, ասեց.— Ջեյրա՛ն, բա ի՞նչ անեմ։

Ասեց.— Նաշար-Օղլի, էտ թրովդ սրան չես կարա սրպանի, սրա ֆոքու թուրը էն ա՛, էն կպրե կարասի մեչն ա, գնա էն թուրը հանա, բեր տուր դրանով սրպանի։

Նաշար-Օղլին գնաց ձեռը բցեց թրին, քաշեց, քաշեց մեկ անքամ՝ չէկավ, մեկ էլ աստված կանչեց ու քաշեց՝ մի քիչ տեղիցը եռաց, մրն էլ քաշեց՝ թուրը զրնգալեն դուս էկավ, բերուց։

Ջեյրանն ասեց.— Տղա, մի՛ անքամ կտաս, որ կասի՝ Մեկ էլ տո՛ւ, չես տա, կասես. «Մորիցս մին եմ ըլել»։— Ախչիկը դևի գլուխը վե դրուց ու հեռացավ։

Նաշար-Օղլին թուրը քաշեց ու տվուց։

Դևն ասեց.— Օխա՜յ, կռներիդ զուրբան, մեկ էլ տուր։— Նաշար-Օղլին ուզըմ էր մին էլ տար, Ջեյրանը վակեց, կուռը բռնեց։

Ասեց.— Չէ՛, մորիցս մին եմ ըլել, չեմ տալ։

Դևն ասեց.— Վա՜յ, քու սարվացնողի մեշկը կոտրի,— ու շորացավ։

Ջեյրանն ասեց.— Դե արի, Նաշար-Օղլի, մալ, դովլաթ, խազնա սրան ունի, բարցա տար։

Ձիանը բարցեցին, ախչիկն ու տղեն նի էլան գնացին։ Գնացին էնտեղ, որ Միրզա-Վալին, ախչիկն ու դևը կաննած իրեն են մտիկ տալի, Ըստեղ նոր էկան Ջեյրանին բարևեցին, ծանոթացան։

Նաշար-Օղլին ասեց.— Միրզա-Վալի, էս ախչիկը քեզ, էս Ջեյրանն էլ ինձ, մինն էլ մեր հոր քաղաքըմը կքթնենք մեր դև ախպորը։— Ասեցին ու ընկան ճամփա գնացին դրբա իրենց հոր տունը։

Մին օր, էրկու օր գնացին, հասան իրենց հոր հանդին, տեհան հանդումը հրես մի մարթ ջուր ա անում։

Նաշար-Օղլին ասեց.— Ա՜յ մարթ, արի քեզ փող տամ, գնա թաքավորին ասա. «Աշկդ լիս, քու տղեն, քու ախպոր տղեն հրեն դալիս ենն»։

Էտ մարթն ասեց.— Վա՜յ, քու հեր թաքավորը էնքան ծերացել ա, որ ա՜շկերըմը լիս չկա. էնքան ա, որ թախտըմը նստած ա։— Մարթը գնաց աշկալիսեք տարավ. թաքավորը իրա զորք-զորապետը դրկեց տղի աղաքը։ Էկան դափով, զուռնով, նայով, սազով, դամով ուրախութեն անելով տարան թաքավորի պալատը։

Թաքավորը տեղիցը վե կացավ, կուռը բռնեցին, գնաց տղի առաջը, ճակատը պաչեց, հարսին օրհնեց, տարավ նեքսև։

Հ՝էքսի օրը մի ախչիկ էլ դևի հըմար քթան, օխտն օր, օխտը քշեր հարսանիք արին, իրեքին էլ պսակեցին, Նաշար-Օղլուն էլ դրին իրա հոր տեղը թաքավոր։ Միրզա-Վալին էլավ նազիր, դև Ասլանն էլ էլավ վազիր։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։